Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 08

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<06>> հունիսի 2023թ. ք. Երևան

2023 թվականի հունիսի 6-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 4 հայտերի քննարկում:

1. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեցին՝

Ֆիզիկական անձեր՝ Արմեն Հրաչիկի Կոծինյանի 30.05.2023թ., Հայկազ Հարությունի Առաքելյանի, Եսայի Ներսեսի Բոսնյանի և Գոռ Սամվելի Աբելյանի 29.05.2023թ. դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց ֆիզիկական անձեր՝ Արմեն Հրաչիկի Կոծինյանի 30.05.2023թ., Հայկազ Հարությունի Առաքելյանի, Եսայի Ներսեսի Բոսնյանի և Գոռ Սամվելի Աբելյանի 29.05.2023թ. դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտը ուսումնասիրվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել է ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն անցնելու փաստը և գազաբալոնների վկայագրման և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթի բնօրինակները:

Ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ Եսայի Ներսեսի Բոսինյանը և Գոռ Սամվելի Աբելյանը կողմից հայտ ձև 1-ում տեղեկացրել են, որ իրենց կողմից ներկայացված Օպել Զաֆիրա մակնիշի համապատասխանաբար՝ 37 GL 110 և 37 RP 146 պետհամարանիշի ավտոմոբիլները գազաբալոնային համակարգով չեն կահավորված և շահագործվում են բենզինային վառելիքով և հայտին կից փաստաթղթերում առկա չեն ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ ավտոմոբիլն այլ տեսակի վառելիքով շահագործման համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում օրինականությունը հաստատող և հերթական փորձարկումները հավաստող փաստաթղթի պատճենը: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ավտոմոբիլները 2022 թվականին անցել են տեխնիկական զննություն և ըստ տեխնիկական զննության էլեկտրոնային շտեմարանի տվյալների՝ Օպել Զաֆիրա մակնիշի 37 GL 110 և 37 RP 146 պետհամարանիշի ավտոմոբիլները էլեկտրոնային շտեմարանում նշված ավտոմոբիլների վառելիքի տեսակը նշված է բնական գազ: Օպել Զաֆիրա մակնիշի 37 GL 110 ավտոմոբիլը նաև իր կայանման վայրում դիտարկվել և լուսանկարվել է նախարարության աշխատակիցների կողմից և ձեռք բերված տվյալների համաձայն՝ այն գազաբալոնային տրանսպորտային միջոց է:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՐՄԵՆ ՀՐԱՉԻԿԻ ԿՈԾԻՆՅԱՆ	5 կողմ, 0 դեմ
ՀԱՅԿԱԶ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ	5 կողմ, 0 դեմ
ԵՍԱՅԻ ՆԵՐՍԵՍԻ ԲՈՍԻՆՅԱՆ	0 կողմ, 5 դեմ
ԳՈՌ ՍԱՄՎԵԼԻ ԱԲԵԼՅԱՆ	0 կողմ, 5 դեմ

Որոշեցին՝

1.1 Արմեն Հրաչիկի Կոծինյանի և Հայկազ Հարությունի Առաքելյանի կողմից ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա են լիցենզավորման:

1.2 Եսայի Ներսեսի Բոսինյանի և Գոռ Սամվելի Աբելյանի կողմից ներկայացված հայտերը և հայտերին կից փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջին՝ ենթակա են մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան